առնլոյ ՚ի նմանէ հաւանութիւն սակս ընդունելոյ զկաթողիկոսութիւնն եղիազարու, գրեցին գիր առ նա ընդարձակ եւ աղաչաւոր բանիւք, որոյ սկիզբն է. «Աստուած պետականին բանական անդաստանաց քրտնաջան մշակիդ օրհնոյ վիճակին Ծիրանի Քրիստոսի անճառ արեամբ գընելոցս, և այլն»։ Տես Սարգիսեան Ընտաղէտ, երես 50։ Եւ առաքեցին զայն յերուսաղէմ ընդ Պետրոս վարդապետի՝ և այլոց որք ընդ նմա էին՝ առ եղիազար, և հրաւիրեցին գալ նմանիլ յիջմիածին, և տիրել ՚ի վերայ ամենայն Հայոց, և ոչ սոսկ միոյ մասին և եթ։ Յանձն առեալ եղիազարու՝ եկ յերուսաղէմ փառօք, և եկն նախ ՚ի Կոստանդինուպոլիս ՚ի 1 Մարտի, և անդ էառ հաստատութիւն իշխանութեան իւրոյ յԱրքունուստ, և կացեալ չաւուրս քանի մի ձեռնադրեաց եպիսկոպոս զկարապետ վարդապետ, զՊատրիարք քաղաքին, և ապա յամենեանն Յունիսի նաւեալ ընդ ծով ՚ի Պոնտոս, գնաց յիջմիածին, և ՚ի 22 Օգոստոսի հասեալ անդր, նստաւ կաթուղիկոս ամենայն Հայոց (1682)։ Եւ վարեալ իմաստութեամբ և քաղցրութեամբ գիշխանութիւն իւր, արար և զբազում չինուածս յիջմիածին և յայլ տեղիս։

Զկնի մեկնելոյ եղիազարու ՚ի Կոստանդինուպոլսոյ՝ եհաս անդր Մարտիրոս վարդապետ, եւ փութաց առնուլ յինքն զՊատրիարքութիւնն Երուսաղէմի, եւ յետ կրելոյ բազում տառապանս և մեռանելոյ ՚ի բանտ վասն բազմագէզ պարտուց իւրոց, ՚ի վախճանի ընկալաւ զայն իշխանութիւն Արքունի հրամանաւ, և եկեալ նստաւ յերուսաղէմ։ Այլ զկնի սակաւ աւուրց անկաւ գժտութիւն ընդ նա եւ ընդ Ցոյն պատրիարքն Երուսաղէմի, եւ ջանայր Մարտիրոս ձեռամբ Լատինաց յաղթահարել զնա։ Եւ պատճառ գժտութեանն թերեւս իցէ այս, որպէս ասացաք ՚ի դասատտանական գիրս։ Հայք ըստ սովորութեանց իւրեանց յաւուր կիւրակէի Զատկի, յորժամ կատարէին ըզհանդէս Թափօրի ՚ի տաճարին Ս. Յարութեան շուրջ ըզԳերեզմանաւն Քրիստոսի, և եկն եկաց հանդիսադիրն Գրիգոր եպիսկոպոս ՚ի դուռն Գերեզմանին. և մինչ ընթեռնոյր զԱւետարանն՝ հասին ՚ի վերայ նորա Ցոյնք բրօք և մահակօք, ՚ի բաց վարեալ զհանդիսականան և զժողովր-